

Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզպետարանի  
գլխավոր քարտուղարի 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N:708 հրամանով

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

<b>1. Ընդհանուր դրույթներ</b>
<p><b>1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը</b>          Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) քաղաքաշինության վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ, ծածկագիրը՝ 98-1.2-Ղ4-1</p> <p><b>1.2. Ենթակա և հաշվետու է</b>          Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզպետին (այսուհետ՝ Մարզպետին)</p> <p><b>1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ</b>          Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության պետի տեղակալը, Վարչության բաժինների պետերը:</p> <p><b>1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները</b>          Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը կամ Վարչության բաժինների պետերից մեկը:</p> <p><b>1.5. Աշխատավայրը</b>          Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Գ.Նժդեհի 16</p>
<b>2. Պաշտոնի բնութագիրը</b>
<p><b>2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները</b></p> <p>1. Ապահովում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի (այսուհետ՝ Մարզ) տարածքում պետական միջոցներով Մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվող կապիտալ շինարարության օբյեկտների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման, կապալառու կազմակերպությունների ընտրության, շինարարության հեղինակային ու տեխնիկական հսկողության աշխատանքների իրականացումը:</p> <p>2. Ապահովում է հանրապետության տարածքային զարգացման տարաբնակեցման նախագծերի և ուրվագծերի վերաբերյալ եզրակացությունների միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու աշխատանքների իրականացումը:</p> <p>3. Ապահովում է Մարզի տարածքում պետական միջոցներով Մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվող կապիտալ շինարարության օբյեկտների նախագծման և հեղինակային ու տեխնիկական հսկողության փաստացի կատարված ծավալներին համապատասխան վճարման գործընթացը:</p> <p>4. Ապահովում է ըստ անհրաժեշտության ստուգումների անցկացումը՝ համայնքներում ինքնակամ և</p>

- քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին չհամապատասխանող շինարարության դեպքեր հայտնաբերելիս, ինչպես նաև քաղաքացիների դիմում-բողոքների հիման վրա:
5. Ապահովում է Մարզի տարածքում քաղաքաշինության ոլորտին վերաբերող Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարումը, Մարզի քաղաքաշինության ոլորտի միջնաժամկետ, ինչպես նաև ամենամյա բյուջետային ծախսերի ծրագրերի կազմման և համապատասխան մարմիններին ներկայացման աշխատանքների իրականացումը, համակարգում է Մարզի և Մարզի բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի կազմումը:
  6. Համակարգում է Մարզի տարածքում ֆինանսական տարբեր միջոցներով կապիտալ շինարարություն և հիմնանորոգում իրականացնող պատվիրատու կազմակերպությունների գործունեությունը:
  7. Ապահովում է Մարզի տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանման գործընթացը:
  8. Ապահովում է Մարզում քաղաքաշինական կադաստրի վարման գործընթացի կազմակերպումը:
  9. Ապահովում է Մարզի տարածքում առկա անավարտ շինարարության օբյեկտների հաշվառման գործընթացի կազմակերպումը:
  10. Ապահովում է քաղաքաշինության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության իրականացման աշխատանքները:
  11. Ապահովում է քաղաքաշինական գործունեության նպատակով համայնքների ղեկավարների կողմից համաձայնեցման ներկայացված փաստաթղթերին վերաբերվող մասնագիտական ուսումնասիրության և համապատասխան մարմիններին առաջարկությունների ու եզրակացությունների տրամադրման գործընթացը:
  12. Համագործակցում է Մարզի տարածքում գործող շինարարական կազմակերպությունների հետ:
  13. Ապահովում է համապատասխան էլեկտրոնային հարթակում պետական գույքի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, ավելացման և խմբագրման աշխատանքների իրականացումը:
  14. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթներով ապահովում է աջակցություն միջմարզային, ներմարզային և համայնքային հասարակական տրանսպորտի աշխատանքների կազմակերպմանը:
  15. Ապահովում է Մարզի ավտոմոբիլային ճանապարհների ամառային և ձմեռային սպասարկումը և շահագործումը, ինչպես նաև ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, հիմնանորոգման, նորոգման աշխատանքների պատվիրատուի գործառույթների իրականացումը և այլ պատվիրատուների կողմից իրականացված աշխատանքներին մասնակցությունը, աջակցությունը և հսկողությունը:
  16. Ապահովում է Մարզի ճանապարհաշինության ոլորտի միջնաժամկետ ծախսային ծրագրի և բյուջետային հայտի կազմումը, ներկայացումը և ՄԺԾԾ-ի քննարկման աշխատանքներին մասնակցությունը, ինչպես նաև Մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների առկա վիճակի, պահպանման մակարդակների գնահատումը և Մարզում

ճանապարհաշինության ոլորտում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների ուսումնասիրությունը, ծրագրերի ու նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմումը:

17. Ապահովում է եղանակային պայմանների, Մարզի ավտոմոբիլային ճանապարհներին տիրող իրավիճակի և ավտոտրանսպորտի անցանելիության մասին պարբերաբար տեղեկությունների հավաքագրումը:

18. Ապահովում է պարբերական հսկողության իրականացում Մարզային ավտոճանապարհների պահպանության և շահագործման աշխատանքների նկատմամբ և թերությունների մատյաններում գրանցումների կատարումը:

19. Ապահովում է Մարզային ավտոճանապարհների պաշտպանական գոտիներում տարբեր շինությունների, կոմունիկացիաների և գովազդների տեղադրման օրինականության ուսումնասիրության աշխատանքների կազմակերպումը:

20. Ապահովում է Մարզում երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների երթևեկության անվտանգությունն ապահովելու գործընթացներին մասնակցությունը, համագործակցությունը և աջակցությունը:

21. Ապահովում է Մարզի համայնքներում բնակարանային ապահովման խնդիր ունեցող (երկրաշարժից անօթևան, բռնագաղթած, բազմազավակ կամ այլ պատճառներով բնակապայմանների բարելավման կարիք ունեցող) ընտանիքների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և համապատասխան բնակապահովման ծրագրերի իրականացմանն ուղղված առաջարկությունների ներկայացման գործընթացը:

22. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված լիազորությունների շրջանակներում ապահովում է Մարզի բնակավայրերում անօթևան ընտանիքների համար նախատեսված բնակարանային ապահովման ծրագրերի (բնակարանաշինություն, ԲԳՎ տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագիր, ֆինանսական աջակցության տրամադրում) իրականացման գործընթացը:

23. Ապահովում է աղետի գոտու բնակավայրերում պետական, համայնքային, ինչպես նաև այլ անձանց սեփականությունը հանդիսացող տարածքներում երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինությունների փաստագրման գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացումը: Մասնակցում է աղետի գոտու բնակավայրերում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող տարածքները ոչ հիմնական շինություններից ազատելու և փաստագրման արդյունքում ի հայտ եկած՝ քաղաքաշինական փաստաթղթերի պահանջներին համապատասխանող շինություններն օրինականացնելու վերաբերյալ առաջարկությունների մշակման գործընթացին:

24. Ապահովում է Մարզի բնակավայրերում բնակարանի կարիքավոր զոհված /մահացած/ կամ հաշմանդամ դարձած զին.ծառայողների /ազատամարտիկների/ ընտանիքների հերթացուցակների ներկայացումը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն:

25. Մարզի բնակչությանը էլեկտրաէներգիայով, գազով, ջրով և հեռախոսակապով ապահովելու նպատակով համագործակցում է համապատասխան կազմակերպությունների

հետ:

26. Ապահովում է Մարզի համայնքներում գերեզմանատների բարեկարգման, մատուցվող ծառայությունների և շահագործման կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողություն:

27. Ապահովում է վերահսկողություն Մարզի համայնքներում գերեզմանատների բարեկարգման, մատուցվող ծառայությունների և շահագործման կանոնների պահպանման նկատմամբ:

28. Ապահովում է Մարզպետին հասցեագրված, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմիններին հասցեագրված և Մարզպետարան վերահասցեագրված գրությունների, դիմումների, բողոքների, առաջարկությունների քննարկման և ուսումնասիրման աշխատանքները.

29. Մասնակցում և ապահովում է Վարչության մասնակցությունը Մարզպետարանի, ինչպես նաև համապատասխան մարմինների տարբեր ստորաբաժանումների հետ կազմակերպված՝ առաջադրված խնդիրների լուծման շուրջ աշխատանքային և մասնագիտական քննարկումներին.

30. Ապահովում է Վարչության խնդիրներից բխող այլ իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, փաստաթղթերի նախապատրաստման, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների մշակման աշխատանքները.

31. Համապատասխան առաջարկություններ է ներկայացնում Մարզպետարանի գլխավոր քարտուղարին Վարչության քաղաքացիական ծառայողների բացակայության դեպքում նրանց փոխարինելու մասին.

32. Մարզպետարանի գլխավոր քարտուղարին է ներկայացնում Վարչության ծրագրերը.

33. Մարզպետարանի գլխավոր քարտուղարին, ըստ անհրաժեշտության, ներկայացնում է առաջարկություններ՝ Վարչության աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար.

34. Վարչության առջև դրված գործառնությունների և խնդիրների իրականացման հետ կապված, ինչպես նաև Մարզպետարանի գլխավոր քարտուղարի գիտությամբ, կարող է հրավիրել խորհրդակցություններ դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների:

Իրավունքները՝

- Մինչև գործընթացի իրականացումը ուսումնասիրել տվյալ օբյեկտի ընդհանուր վիճակը, անհրաժեշտության դեպքում ձեռքբերել տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացություն, ներկայացնել հայտեր համապատասխան համայնքների ղեկավարներին՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքի, ինչպես նաև ինժեներական ենթակառուցվածքներին միանալու տեխնիկական պայմաններ ստանալու համար:
- Դիտողություններ և առաջարկություններ ներկայացնել առաջարկվող փաստաթղթային փաթեթի վերաբերյալ:
- Տեղում ստուգելու կապալառու կազմակերպության, հեղինակային ու տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների կողմից ներկայացված աշխատանքների ծավալները:
- Բացահայտված ապօրինի շինարարության կանխման, կասեցման և հետևանքների վերացման

գործընթացի շրջանակներում հանձնարարել համապատասխան բաժնի աշխատակիցներին տեղում ուսումնասիրել ապօրինի շինարարության հիմքերը:

- Մարզի քաղաքաշինության ոլորտի միջնաժամկետ, ինչպես նաև ամենամյա բյուջետային ծախսերի ծրագրերի կազմման գործընթացի շրջանակներում դիմել համայնքների ղեկավարներին և Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներին՝ քաղաքաշինության ոլորտում առկա հիմնախնդիրները քննարկելու և համապատասխան ծրագրերում ներառելու նպատակով:
- Հայտնաբերված թերությունների առկայության դեպքում ներկայացնել առաջարկություններ՝ թերությունների վերացման վերաբերյալ:
- Մարզի տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանման գործընթացի շրջանակներում համայնքների ղեկավարներից ներկայացված նախագծային փաթեթներում թերություններ հայտնաբերելիս հետ վերադարձնել լրամշակման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին չհամապատասխանելու դեպքում չհամաձայնեցնել ներկայացված առաջարկը:
- Մարզում քաղաքաշինական կադաստրի վարման գործընթացը կազմակերպելու նպատակով համայնքների ղեկավարներից հավաքագրել համապատասխան տեղեկատվություն:
- Մարզի տարածքում առկա անավարտ շինարարության օբյեկտների հաշվառման և ավարտին հասցնելու նպատակով համայնքների ղեկավարներին ներկայացնել առաջարկություններ՝ կիսակառույց շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացություններ ստանալու համար:
- Քաղաքաշինության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացի շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթային հիմքերը՝ քաղաքաշինության ոլորտին վերաբերող հարցերի ուսումնասիրության նպատակով:
- Հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքերում, Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում, քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ առանձնացված տարածքներում կառուցապատումներ իրականացնելու նպատակով համայնքների ղեկավարների կողմից համաձայնեցման ներկայացված փաստաթղթերում թերություններ հայտնաբերելու դեպքում հետ վերադարձնել լրամշակման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին չհամապատասխանելու դեպքում չհամաձայնեցնել ներկայացված առաջարկը:
- Համագործակցել Մարզի շինարարական կազմակերպությունների հետ՝ ստանալով տեղեկատվություն տվյալ բյուջետային տարվա ընթացքում իրականացված շինարարական աշխատանքների վերաբերյալ, հրավերներ ներկայացնել նախատրակավորման փուլին մասնակցելու համար:
- Համապատասխան էլեկտրոնային հարթակում ավելացնել և խմբագրել գույքի վերաբերյալ տեղեկատվություն:
- Լիազոր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության, կողմից կազմակերպված միջնարգային և ներմարգային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղային ցանցերի համաձայնեցում իրականացնել:
- Ցանկացած ժամանակ ստուգել կապալառուի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և

որակը՝ առանց միջամտելու կապալառուի գործունեությանը: Եթե կատարվել է տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք չընդունել աշխատանքը: Այլ պատվիրատուների կողմից իրականացվող ավտոմոբիլային ճանապարհների շինարարության աշխատանքներին աջակցություն և հսկողություն իրականացնել:

- Մարզի ճանապարհաշինության ոլորտի միջնաժամկետ ծախսային ծրագրի և բյուջետային հայտի կազմման նպատակով հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվություն: Ճանապարհաշինության ոլորտում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների ուսումնասիրության, ծրագրերի կազմման աշխատանքների նպատակով ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների առկա վիճակի վերաբերյալ հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվություն:
- Մարզի եղանակային պայմանների, Մարզի ավտոմոբիլային ճանապարհներին տիրող իրավիճակի և ավտոտրանսպորտի անցանելիության մասին պարբերաբար հավաքագրել տեղեկություններ:
- Պարբերական հսկողության իրականացնել կապալառուի կողմից կատարվող աշխատանքի ընթացքի և որակի նկատմամբ՝ առանց միջամտելու կապալառուի գործունեությանը:
- Հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքերում Մարզային ավտոճանապարհների պաշտպանական գոտիներում տարբեր շինությունների, կոմունիկացիաների և գովազդների տեղադրման օրինականության ուսումնասիրության և կառուցապատումներ իրականացնելու նպատակով համայնքների ղեկավարների կողմից համաձայնեցման ներկայացված փաստաթղթերում թերություններ հայտնաբերելու դեպքում հետ վերադարձնել լրամշակման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին չհամապատասխանելու դեպքում չհամաձայնեցնել ներկայացված առաջարկը:
- Հայաստանի Հանրապետության երկաթուղային գծանցների շահագործումը կանոնակարգելու միջոցով երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների երթևեկության անվտանգությունն ապահովելու նպատակով ստեղծված հանձնաժողովի աշխատանքներին մասնակցություն ապահովել:
- Մտուգել համայնքների ղեկավարների կողմից ներկայացված բնակարանային ապահովման խնդիր ունեցող (երկրաշարժից անօթևան, բռնագաղթած, բազմազավակ կամ այլ պատճառներով բնակապահովման կարիք ունեցող) ընտանիքների հերթացուցակների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ներկայացվող պահանջներին: Անճշտությունների դեպքում դրանց մասին տեղեկացնել համայնքների ղեկավարներին և պահանջել սահմանված ժամկետում տրամադրել ցուցակների լրամշակված տարբերակները:
- Համակարգել վարչության աշխատակիցների կողմից կատարվող աշխատանքը, ստուգել բնակապահովման ծրագրի շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ հավաքագրված տեղեկատվություններն ու կազմված բնակարանային գործերը: Աճշտությունների դեպքում պահանջել լրամշակել շահառուների ցուցակները, համապատասխան փաստաթղթերով համալրել բնակարանային գործերը, ինչպես նաև կազմել բնակապահովման ծրագրի ընթացքի վերաբերյալ տեղեկանքներ:
- Մտուգել համայնքների ղեկավարների կողմից ներկայացված տեղեկատվությունների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ներկայացվող պահանջներին: Անճշտությունների դեպքում դրանց մասին տեղեկացնել համայնքների ղեկավարներին և պահանջել սահմանված ժամկետում տրամադրել ոչ հիմնական շինությունների փաստագրման գրաֆիկական և աղյուսակային նյութերի լրամշակված տարբերակները:

- Ստուգել համայնքների ղեկավարների կողմից ներկայացված բնակարանի կարիքավոր գոհված /մահացած/ կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների հերթացուցակների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ներկայացվող պահանջներին: Անճշտությունների դեպքում դրանց մասին տեղեկացնել համայնքների ղեկավարներին և պահանջել սահմանված ժամկետում տրամադրել ցուցակների լրամշակված տարբերակները:
- Մարզի բնակչությանը էլեկտրաէներգիայով, գազով, ջրով և հեռախոսակապով ապահովելու նպատակով համագործակցել համապատասխան կազմակերպությունների հետ:
- Ապահովել հսկողություն համայնքների գործող գերեզմանատների մաքրության, աղբահանության, գերեզմանի վկայականների տրամադրման և հողերի օգտագործման հատակագծերի մշակման գործընթացի նկատմամբ:
- Վերահսկել աղբի և թափոնների վերամշակման աշխատանքների գործընթացը:
- Գրությունների, դիմումների, բողոքների առաջարկությունների վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմիններից, համապատասխան այլ մարմիններից ու քաղաքացիներից ստանալ անհրաժեշտ տեղեկություններ, նյութեր և փաստաթղթեր, ապահովել բարձրացված հարցերի վերաբերյալ քննարկումներ, Մարզպետին ներկայացնել առաջարկություններ այլ ստորաբաժանումներից համապատասխան մասնագետների ներգրավման վերաբերյալ:

#### Պարտականությունները՝

- «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին հապատասխան կազմակերպել օբյեկտների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, կապալառու կազմակերպությունների ընտրության, շինարարության հեղինակային ու տեխնիկական հսկողության աշխատանքների իրականացման ընտրության գործընթացը: Հաստատել գնումների գործընթացի մասնակից կազմակերպությունների կողմից ներկայացված, Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխանող փաստաթղթերի փաթեթները:
- Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեից ստացված փաստաթղթային փաթեթն ուսումնասիրել և տալ վերջնական եզրակացություն:
- Իրականացվող կապիտալ շինարարության օբյեկտների, ինչպես նաև հեղինակային ու տեխնիկական հսկողության փաստացի կատարված ծավալներին համապատասխան վճարման գործընթացի շրջանակներում հաստատել կապալառու կազմակերպությունների կողմից ներկայացված հանձնման-ընդունման արձանագրությունները:
- Համայնքներում ինքնակամ և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին չհամապատասխանող շինարարության դեպքեր հայտնաբերելիս դիմել համապատասխան իրավասու մարմնին՝ ապօրինի շինարարության կանխման, կասեցման և հետևանքների վերացման առաջարկությամբ, ինչպես նաև տեղեկացնել պետական լիազոր մարմնին:
- Մարզի քաղաքաշինության ոլորտի միջնաժամկետ, ինչպես նաև ամենամյա բյուջետային ծախսերի ծրագրերի կազմման գործընթացի շրջանակներում համապատասխան լիազոր մարմիններին ներկայացնել միջնաժամկետ ծախսային ծրագրերի հայտերը և մասնակցել դրանց քննարկմանը:
- Մարզի տարածքում ֆինանսական տարբեր միջոցներով կապիտալ շինարարություն և հիմնանորոգում իրականացնող պատվիրատու կազմակերպությունների

գործունեության բնագավառում իրականացնել մշտադիտարկման աշխատանքներ:

- Մարզի տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանման գործընթացի շրջանակներում համայնքների ղեկավարներից ստացված փաստաթղթային փաթեթը համապատասխան եզրակացությամբ ներկայացնել վերադաս մարմինների համաձայնեցումներին:
- Մարզում քաղաքաշինական կադաստրի վարման գործընթացի շրջանակներում հավաքագրել տեղեկատվություն՝ գոյություն ունեցող շենք շինությունների վերաբերյալ և մշակված ձևաչափերով ներկայացնել համապատասխան լիազոր մարմին:
- Մարզի տարածքում առկա անավարտ շինարարության օբյեկտների հաշվառման գործընթացի շրջանակներում համապատասխան լիազոր մարմնի քննարկմանը ներկայացնել առաջարկություններ՝ կիսակառույց շենքերը ավարտին հասցնելու վերաբերյալ:
- Քաղաքաշինության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացի շրջանակներում ներկայացնել վարչության մասնագետների թեկնածությունները Մարզպետի որոշմամբ համապատասխան աշխատանքային խմբերում ընդգրկվելու համար: Հանձնաժողովի կազմում ուսումնասիրել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը քաղաքաշինության ոլորտում՝ ըստ լիազոր մարմնի կողմից տրամադրված հարցաշարի: Արձանագրել քաղաքաշինության ոլորտում հայտնաբերված թերությունները և առաջարկություններ ներկայացնել դրանց վերացման ուղղությամբ, ինչպես նաև հսկողություն իրականացնել այդ գործընթացի նկատմամբ:
- Հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքերում, Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում, քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ առանձնացված տարածքներում կառուցապատումներ իրականացնելու նպատակով համայնքների ղեկավարների կողմից համաձայնեցման ներկայացված փաստաթղթերը ուսումնասիրել Ոստիկանության ղեկավարից ստացված տեղում, կազմել մասնագիտական եզրակացություններ ու առաջարկություններ՝ համապատասխան լիազոր մարմինների համաձայնեցմանը տրամադրելու նպատակով:
- Համայնքներից հավաքագրել պետական գույքերի վերաբերյալ տեղեկատվություն, համաձայնեցնել և մուտքագրել համապատասխան էլեկտրոնային հարթակում:
- Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի համալիր զարգացման, ամբողջական, արդյունավետ, անվտանգ և որակյալ գործունեության ապահովման աշխատանքների կազմակերպմանը մասնակցություն և աջակցություն ապահովել: Միջմարզային, ներմարզային և համայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղային ցանցերի կազմակերպման աշխատանքներին աջակցություն ապահովել: Ապահովել ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտի երթուղային ցանցի բարեփոխման, ինչպես նաև ուղևորների սպասարկման բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը:
- Ապահովել Մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների և արհեստական կառույցների պահպանվածությունը այնպիսի վիճակում, որը համապատասխանում է տարվա ցանկացած ժամանակ անվտանգ երթևեկության ապահովման



պահանջներին: Ապահովել սպասարկվող ճանապարհահատվածներին տրանսպորտի շուրջօրյա և անվտանգ երթևեկությունը համաձայն ճանապարհների պահպանման կանոնների: Քննարկել և ընդունել տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կապալառուի կողմից կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել կապալառուին, իսկ աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

- Մարզի ճանապարհաշինության ոլորտի միջնաժամկետ ծախսային ծրագրի և բյուջետային հայտի կազմում, գլխադասային մարմնին ներկայացում և քննարկման աշխատանքներին մասնակցություն: Մարզային (տեղական) նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների առկա վիճակի գնահատման, ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և ճանապարհաշինության ոլորտում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների ուսումնասիրության, ծրագրերի ու նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ապահովում:
- Ելնելով եղանակային պայմաններից և Մարզի ավտոմոբիլային ճանապարհներին տիրող իրավիճակից ապահովել սպասարկվող ճանապարհահատվածներին տրանսպորտի շուրջօրյա և անվտանգ երթևեկությունը համաձայն ճանապարհների պահպանման կանոնների:
- Քննարկել և ընդունել տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կապալառուի կողմից կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին գրանցումներ կատարել թերությունների մատյաններում:
- Հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքերում, Մարզային ավտոճանապարհների պաշտպանական գոտիներում տարբեր շինությունների, կոմունիկացիաների և գովազդների տեղադրման օրինականության ուսումնասիրության և կառուցապատումներ իրականացնելու նպատակով համայնքների ղեկավարների կողմից համաձայնեցման ներկայացված փաստաթղթերը ուսումնասիրել Սանհրաժեշտության դեպքում նաև տեղում, կազմել մասնագիտական եզրակացություններ ու առաջարկություններ՝ համապատասխան լիազոր մարմինների համաձայնեցմանը տրամադրելու նպատակով:
- Առաջարկել համապատասխան համայնքների ղեկավարներին համագործակցելով «Հարավ-կովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի հետ ապահովել երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների երթևեկության անվտանգությունը:
- Համայնքների ղեկավարների կողմից ներկայացված հերթացուցակները, ինչպես նաև անօթևան ընտանիքների համար նոր բնակապահովման ծրագրերի նախագծերի վերաբերյալ առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել լիազոր մարմնին:
- Համապատասխան փաստաթղթերի հիման վրա կազմված վճարման ժամանակացույցերը ներկայացնել Գլխավոր քարտուղարի հաստատմանը:
- Համայնքների ղեկավարների կողմից փաստագրված պետական, համայնքային կամ այլ անձանց սեփականությունը հանդիսացող տարածքներում երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինությունների գրաֆիկական և աղյուսակային նյութերը տրամադրել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեին, ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների վերաբերյալ կազմված ցուցակներն ուղարկել Հայաստանի Հանրապետության ոստիկանություն և Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտե՝ ցուցակում նշված քաղաքացիների մշտական բնակության մասին, ինչպես նաև բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վերաբերյալ

տեղեկատվություններ ստանալու համար, իսկ ստացված տեղեկատվություններն՝ ուղարկել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե: Անհրաժեշտության դեպքում մասնակցել աշխատանքային խմբերի քննարկումներին և ներկայացնել առաջարկություններ ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների վերաբնակեցմանն ուղղված միջոցառումների իրականացման, ինչպես նաև փաստագրման արդյունքում ի հայտ եկած՝ քաղաքաշինական փաստաթղթերի պահանջներին համապատասխանող շինություններն օրինականացնելու վերաբերյալ:

- Մարզի բնակավայրերում բնակարանի կարիքավոր զոհված /մահացած/ կամ հաշմանդամ դարձած զին.ծառայողների /ազատամարտիկների/ ընտանիքների բնակարանային գործերի ուսումնասիրության արդյունքում կազմված և ամփոփված հերթացուցակները ներկայացնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն: Անհրաժեշտության դեպքում իրազեկել համայնքների ղեկավարներին նոր բնակապահովման ծրագրերի պայմանների և պահանջվող փաստաթղթերի հավաքագրման մասին:
- Գազամատակարարման, ջրամատակարարման, էլեկտրամատակարարման կամ կապով ապահովման ոլորտներին առնչվող դիմում-բողոքներ ստանալու դեպքում ուսումնասիրել բարձրացված հարցերը և դրանց մասին իրազեկել համապատասխան կառույցների ղեկավարներին (խնդիրների լուծման համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու առաջարկով):
- Համայնքների գործող գերեզմանատների մաքրության, աղբահանության, գերեզմանի վկայականների տրամադրման և հողերի օգտագործման հատակագծերի մշակման գործընթացի շրջանակներում ի հայտ եկած թերությունների դեպքում դրանց մասին իրազեկել համապատասխան համայնքի ղեկավարին և առաջարկել ձեռնարկել համապատասխան միջոցներ դրանց վերացման ուղղությամբ:
- Լիազոր մարմին ներկայացնել տեղեկատվություն՝ աղբի և թափոնների վերամշակման աշխատանքների կազմակերպման վերաբերյալ:
- Ապահովել Վարչության խնդիրներից բխող այլ իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, փաստաթղթերի նախապատրաստման, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների մշակման աշխատանքները: Կատարված աշխատանքների վերաբերյալ Մարզպետին ներկայացնել գրությունների նախագծեր, զեկուցագրեր, տեղեկանքներ և այլ փաստաթղթեր:

### 3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

#### 3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

1	Ուղղություն	ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
2	Ոլորտ	ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

#### 3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

#### 3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ քաղաքաշինության կամ արդյունաբերության կամ ճարտարագիտության

բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ.  
(3.3 կետը փոփ. 27.02.2020թ. N:236 հրաման)

### 3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Կոնֆլիկտների կառավարում
4. Հասարակության հետ կապերի ապահովում
5. Ծառայությունների մատուցում
6. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
7. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
8. Ֆինանսների և ռեսուրսների կառավարում

### 4. Կազմակերպական շրջանակը

#### 4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

#### 4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

#### 4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

#### 4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

#### 4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից

Պեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ կամ մասնակցում է այդ խնդիրների լուծմանը: